ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ՊԱՐՈՆ Է. ԱՎԱՆԵՍՈՎԻՆ

Հարգելի պարոն Ավանեսով.

Ի պատասխան Ձեր 16.03.2021թ. գրության՝ տեղեկացվում է, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների կողմից Շերամի փողոցի հ.111/6 հասցեի հարակից տարածքում գործող օբյեկտների սեփականատերերի և տիրապետողների շրջանում իրականացվել են բացատրական աշխատանքներ՝ թղթի թափոնների տեսակավորման համար նախատեսված աղբամաններից օգտվելու կանոնների վերաբերյալ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի թափոնների տեսակավորման վարչության աշխատակիցները ս.թ. մարտի 29-ին Շերամի փողոցի հ.111/6 հասցեում՝ բնակիչների և տնտեսվարողների շրջանում, կիրականացնեն իրազեկում՝ թափոնները նախատեսված վայրում նետելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ